



ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 4

1862

ԱՊՐԻԼ 1

ՀԱՅՍՏԻՐ

Ահեկանի ժը — 25 Ապրիլի:

Բագրեռանդայ Կռիռն:

“Յակունս Լսփրատայ, ՚ի ծաղկազարդ վայելչութիւնան”, ըստ սրբազան երգչին, ՚ի ծմակս Դաղկոտան և ՚ի բարձրաւանդակն Բագրեւանդայ, հրաւիրէ զմեզ այսօր Հայադիրն: Ի՞նչ գեղեցիկ հովիտ, մանաւանդ թէ ինչ ընդարձակ դաշտ լցեալ զարդուք բուսաբերութեան, զոր կու սնուցանեն հարիւրաւոր ականակիտ վտակք, իջնելով ՚ի կողից այրարատեան լեռնաշարից և Ղլթամարայ պարստափին, որք ամէն կողմանէ շրջապատեալ ձևացրնեն այս ձուած և տաշտանման հովիտս, իբրև 30 մղոն երկայն արևելքէ յարևմուտք, և 30 մղոն լայն ՚ի հիւսիսոյ ընդ հարաւ. և ժողովելով ՚ի գոգավայրն և խառնելով ընդ գլխաւոր վտակին, կու գետանան կ՛ըլլան պայծառն Արածանի, արևելեան օժանդակ և զուգակից ե-

ղեմաբուղիս Լսփրատայ, որ ՚ի Բարձր Հայոց ՚ի գագաթէն Կարնոյ իջնայ, և երկուքն այլ ՚ի համանուն Դաղկեոյ լերանց: Եթէ այս մեծ տաշտաձևիս հարաւային շրթունքն, Լպահունեաց (Սէլազկերտ) և Դաղկոտան (Խյամուր, Տիատին) լերինքն՝ ձեղքուելով անցք մը չտային Լրածանոյ, անշուշտ գեղեցիկ և քան զՂլթամար ընդարձակ ծովալիճ մը կ՛ըլլար Բագրեւանդ, և թերևս երբեմն այնպէս այլ եղած ըլլայր ստուգեն մեզի երկրաբանք. քննելով հոն նաև զԲագրեւանդայ կողն, զծծմաղբերս, և անոնց քարացեալ ուլունքը: ... Բայց դուք, կ՛իմանամ, ո՞վ հայալուրք, ո՞վ հայկակք, դուք հոս և հիմա աւելի ծաղկահասն կ՛ուզէք ըլլալ քան երկրաբան. այս հովիտներուս մէջ մտնելնուդ պէս՝ Երևանի վանք

կու բնառէք, ձեր հին նախնեաց հետ
 կու փափագիք նաւասարդի աշխար-
 հախումք հանդէսները կատարել. բայց
 դեռ իրեք չորս ամիս կայ այն տօնե-
 րուն. ուրիշ անգամ այլ կու գամք ՚ի
 Ռագրեանդ, որ ոչ սակաւ յիշատակ-
 ներ ունի. . . Ռայց քանի մը ամսէ ետեւ
 ամառուան տաքուն՝ հիմկու ծաղկանց
 դալարութիւնը չեմք գտներ, կ'ըսէք.
 — այն ատենն այլ ունի իր լեռնաբու-
 սիկ գոյնզգոյն ծաղկներն. սակայն ես
 չեմ ուզեր զձեզ զրկել. ժուռ եկէք,
 հաւաքեցէք այդ մաքուր առուակաց
 եզերք և կանաչազգեստ բլրակաց կո-
 ղերէն ընտրածնիդ և սիրածնիդ. . . .
 Ընծաղկունքդ ծածանին փնջիկ փրն-
 ջիկ, թուռնքդ ձայնեն անուշիկ, ջրերն
 կրկրջան զովիկ զովիկ. դուք դեռ գուս-

նակ մ'այլ ուզէք որ երգէ ձեզի զգա-
 րուն. — Չեն պակսեր գարուն երգող
 հայ գուսանք, ձեռնաւորք և մշակք,
 սրբամօրուս պաշտօնեայք, և պատ-
 ըրարք և կաթողիկոսք անգամ. այս-
 քան զգալի և շոշափելի բնութեան և
 վայրաց գեղեցկութիւնն՝ գրեթէ հար-
 կաւ երգիչ և բանաստեղծ ըրած է գա-
 նոնք, գոնէ գարուն գովելու համար.
 Բայց Արտանդին երգնկացին, իսկաջը-
 նորհ, իսկատիպ (original ըսել կ'ու-
 զեմ) գուսան 550 տարուան, յանձն
 չառնուր ասանկ դրսէն դրդեալ քեր-
 դող ըլլան, այլ տեսիլք տեսներով,
 լոյս տեսներով առեր է այդ շնորհքը,
 այնպէս որ ինքն իր բանաստեղծելուն
 վրայ կու զարմանայ.

“ Եղէւ յանկարծակի ինձ բան խօսիլ ով ուզենայ.
 Ընայէս որ ես ի յիմ խօսից շարելն զարմացայ.
 Աիրով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ,
 Օ հոգիս փոխան տըւի, ւապայ ես այն հոգոյն հասայ:
 Իմ բանս ի յայն լուսոյն եկել առ իս ինձ մանանայ,
 Ար իմ աջօքս ես զինք բարձր ի յաթոռ նստած տեսայ.
 Երբոր զայս մեծ պարգևքս ի յայն լուսոյն ես ընկալայ
 Այս զիմ մարմինս հոգևովս իր սուրբ տեսոյն գրրեմ ծառայ. . . .”

Ընին շնորհք, ազնիւ շնորհակա-
 լութիւն. բայց ուրիշ ատենի թողլով
 տեսիլքդ պատմել, հիմա մեզի գարնան
 երգերէդ մէկն երգէ. — Ընաւասիկ.
 Ա՛նք գոհութիւն, հարիւր հազար,
 Ա՛նք աւետիք է նոր հասել.
 Եւ մեզ շնորհք յերկնաւորէն
 Ա՛նքնից յերկիրս ի մեզ հոսել,
 Երկիր էր լի մութն և մըլար,
 Ա՛նքն էր կապել եւ պաղ ու քար.
 Հանց որ չըկար բոյս մի դալար.
 Հիմի՛ ինք նոր է զարգարել:
 Չըմեռն բանդ էր եւ խաւար.
 Գարուն է հաս ու նոր բահար,
 Ի էառ ի մէջ գիշերն աւար.
 Օ ի արեգակն է մեզ ծագել:
 Երկիրս է մայր աննրմանի,

Օ ինչ գեղեցիկ իրք՝ ծընանի,
 Շատ բարութիւնք յինք սընանի.
 Հանց որ փոխն գեղեցկացել:
 Երբոր հնչեց հողմըն հարաւ՝
 Օ ինչ տրտմութիւն յերկրէ տարաւ.
 Հանց որ չըկայ տեղ մի ծարաւ.
 Ըմէնն են բարութեամբ լըցել:
 Հեզ որոտաց ամբ ցողաբեր,
 Ամար կապի յերկինս ի վեր,
 Հոսէ յերկիր ահեզ գետեր.
 Հաւսար զերկիր են արբուցել:
 Եւ հարսանիք տիեզերաց,
 Ի ցընծութիւն պտղաբերաց.
 Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց
 Ընդկունք զերկիր են զարգարել:
 Եւ զովն գրբուրդ առնու սիրով,
 Ի յաղան զեռունք յերկիր ու ի ծով.

Լիւնքտ յորդոր քան պաղ ու հով,
 Եւ ի քարէն յառաջ բղխել:
 Լ՛հեղ գոչէն գետերտ յորով
 Յորդ ի լերունքտ ի վայր գալով,
 Վան ման ի ման ծաւալելով,
 Սիրով ի ծովն երես դըրել:
 Խաղան եղունք եւ այծեմունք,
 Իջնուն ի դաշտ շաղբիւրակունք.
 Լրէվայրիք եւ անասունք
 Ի կապանաց են արձակել:
 Նաւերտ քան քաղցր ձայնով
 Երծեռն ի հետ սաղմոսելով.
 Վայ արտուտիկըն կարգալով
 Օ առաւօտուն է բարբառել:
 Լ՛նուն առնուն եւ ծընանին
 Նաւ ու գազանք լերէվայրին:
 Զառք հաւերտ էլնեն պարին,
 Ի են միաբան երամ կապել:
 Երկունքըն քան եւ ժողովին
 Ի բուրաստան լի բաղանին.
 Սէկ մի մըտել ի մէջ ծովին,
 Տեսն է դեղին սերեր կացել:
 Երուն եհաս շաքարբերան,
 Լէտաբեր մեծ յարութեան.
 Սարդին եհար կանանչ վըրան
 Եր գայ բազմի զերդ հուր վառել,....

Լաւ է, լաւ է, բայց բաւ է. երբ
 բլուրի և վարդի խօսք բացուի՝ երգն
 շատ կ'երկրննայ. ապրիս Կոստանդին.
 ուրիշ անգամ լսենք քու վարդաբա-
 նութիւնդ այլ վարդապետութիւնդ
 այլ: Նիմա հանգչի քնարն, հանգչին
 ծաղկունքն այլ. վասն զի յանկարծա-
 հաս հովու մը պէս օրուանս յիշատակն
 կանցնի հովտէս, և կ'այլազունէ զգա-
 բուն: Կաստիս երկու ծայրերէն կու
 լուի խոր դղրդիւն մը, ոտնաձայն մը,
 ահեղ շնկոց մը. լերանց գլխէն փոշ-
 խառն ամպեր կ'ելնեն, անոնց մէջէն
 ձերմակ փայլակներ. արեւմուտքէն ե-
 կածն դիմացի արեւուն ճառագայթնե-
 բովը վառվըռած արծաթէ հեղեղ մը
 կու նմանի՝ որ Բարձր Տայոց դարերէն
 փոյթափոյթ թնդալով կու թափի հոս.

արեւելեան կողմէն եկածն աղիւսագործ
 ծագ հնոցէն ելած սեւ ծուխերու պէս
 կու ծառանայ ու կու ցածնայ... Լ՛ր
 սոնք յիրար չմտեցած՝ մենք մօտենանք
 պատմութեան ճամբով. անցնինք հա-
 զարով տարիներ, այսօրուան ամսակէ-
 տին հետ զուգենք տարէկէտն այլ,
 Բրիտտոսի 775 թուին: Լ՛յս նշանա-
 կեալ տարիս՝ վերջին տարի է կենաց
 և իշխանութեան երկու մեծ ինքնա-
 կալաց՝ որք մէջերնին լաժնած են ա-
 րեւելքի բաղդը և դժբաղդութիւնը:
 Սէկն է Կոստանդին կայսրն, անուանի
 իր պատկերամարտութեամբ և մտու-
 թեամբ, որոց համար նոյն իսկ իր ազ-
 գէն, ի Յունաց՝ ստացեալ գարշելի ա-
 նունը՝ պահէ մինչև ցայսօր, Գոթրծնիսս.
 (...): Պուկարաց և պատկե-
 րաց հետ կուռելէն ատեն չունէր արե-
 ւելք հոգալու և պաշտպանելու հպա-
 տակները, որոց մէջ սեպուէին և մասն
 մի Տայոց: Սէկ այն է Լ՛պուճեաֆար
 Լ՛պո-Լ՛լաճ Լ՛լ-Լ՛անսուր, զոր պատ-
 միչք մեր Ս՛ափր անուանեն, խալիֆայ
 Լ՛բաբացոց, որ ամիրապետութեան
 հին աթուր փոխադրեց ՚ի նորոգեալն
 Բաղտատ (763), և Կոթրծնիսսի
 թուրութիւնը տեսնելով՝ իր բռնու-
 թիւնը տարածեց ինչուան ՚ի Կիւրիկիա,
 որով Ս՛եծ և Փղոր-Տայք այլ ընկան
 իր ընչաբաղդութե և անդթութեանց
 տակ. որոց համար շատ մեղադրուած
 է բնիկ և օտար պատմիչներէ. վասն զի
 համառօտ ըսելով իր 21 տարուան ու
 4 ամսուան իշխանութեան ատեն վեց
 կարիւր կապուր մարդ սպաննել ջարդել
 տուաւ, կ'ըսեն. որոց մէջ անշուշտ քա-
 նի մը բիւր այլ ազգակից պէտք է ող-
 բալ: Լ՛յդպիսի ամիրապետ մը ունող
 ամիրայք՝ անկէ գթասիրտ չէին կրնար
 ըլլալ: Իր իշխանութեան ատեն Տայա-
 ստանի ոստիկանաց մէջ (վասն զի
 այսպէս կ'անուանէին Լ՛բաբացոց ե-
 կեալ կուսակալքն) ամէնէն գլխաւորն
 է Լ՛բղլա, եղբայր համանուն նախորդ
 ամիրապետին, որ ընդհանուր Պարսից
 և Տայոց կողմանց մեծ կողմնակալ էր.
 և ուրիշ կամահաճոյ հրամաններէն

զատ՝ այս այլ դրաւ իր հպատակացը՝ որ մօրուքնին ածիլեն, և զլուիննին կանգուն ու կէս բարձր խոյր մը դնեն. այս և ասոր նման պատուէրքներով կու գային ՚ի հայս ոստիկանք և հարկահանք. ինչպէս Սուլէման, Օալէհ, Սուհ, Սուսէ, Սուհամմէտ, Լէզիտ, Պէքիր (Լաքար ըստ մեր պատմաց), որք այնչափ կեղեքեցին աշխարհնիս, մինչև շատերն փախելով գետնի տակ և քարայրներու մէջ պահուրտէին: Սամանակին հոգեւոր տէրն Տրդատ կաթողիկոս, և հայոց ազգային հոգաբարձուն Սահակ բագրատունի՝ շատ անգամ բողոքեցին Մարտիակի. իսկ նա ոստիկանները կու փոխէր, բռնութիւնը կու թողար: Լոյսպէս յետ վերոյ յիշեալ Լէզիտաց և Պէքիրաց՝ խաւրեց (770) զհասան-Իպն-Բահապա (որդի Կահադբայ ըստ մերոցս), որ հետը բերաւ խորասան-պարսիկ անկարգ գունդ մը, որոց ըրած չարութիւններէն քանի մը յիշելով ժամանակակից և ականատես պատմիչն (Վ և ռնդ) զգուշելով կ'ըսէ. «պատմել ոչ կարեմք զաղէտիցն պատմութիւն», մեք այլ այնպէս ընեմք, որ արցունքով չիթօշին ապրիլի ծաղկըներն: . . . Բայց ինչ ընէ խեղճ ժողովուրդն, որ ունեցածը բռնահասն հարկահանաց տալէն ետև՝ չունեցածն այլ տալու համար կու ծեծուի, կու կախուի, սառուցեալ լճից մէջ կու ձգուի. ինչ ընէ հին հայութեան մնացած զինուորութիւնն, որ իր եղբարց դառն հեծութիւնը կու լսէ. ինչ ընեն Կարամի և Կախշուանի եկեղեցեաց մէջ այրած նախարարներէն մնացեալ ճիւղ իշխաններն՝ որ իրենց սեփական պայազատութիւնը այսպէս տակն ու վրայ կու տեսնեն. ինչ ընեն մանաւանդ մեծասիրտ Սամիկոնեանքն Մարտաւազդ և Սուշեղ, որդիք հմայեկայ և հրահատայ. միթէ վիրաւորեալ առիւծուց նման միայն մունչէն իրենց աչաց առջև անապատացեալ հայրենեաց վրայ: . . . Լոյսպէս չըրին. այլ յուսահատութեան մուռնչ մը մունչելով զայրոսպին սրտիւ, իրենց սրտակցաց ու պա-

տուակցաց ձայն տուին. որք, ըստ ասելոյ պատմիչին, «եղին զոգի ՚ի ձեռի ՚իւրեանց, և ձեռնամուխ եղեն յիրոջ որ ոչ կարէին վճարել, վասն զնուազունք էին. այլ սակայն լաւ համարեալ զմահաբաշութեամբ, քան ըզկեանս վտանգաւոր, ձեռնամուխ եղեն»: Կախ եռանդունն Մարտաւազդ, անվախ, բայց և ոչ առանց խորամանկութեան իրեն հին նախնոյն Պայլ-Սահանայ, յանդգնօրէն գնաց ՚ի մայրաքաղաքն հայոց՝ ՚ի Վուին ուր արաբացի ոստիկանին փոխանորդ զօրավար նստէր, և գրեթէ անոր աչաց առջև իր սակաւաթիւ գունդը ժողովելով՝ սկսաւ զինքը զրահել պատերազմական պատրաստութեամբ, համբաւելով թէ թշնամեաց դէմ պիտի երթայ: Մարաբացի զօրավարք՝ իրենցմէ հաւատարիմ կարծելով զնա, միանգամայն և չուզելով իրենք զիրենք վտանգել թերևս օգնեցին այլ զինքը զինելու. և իբրև յառաջամարտիկ գունդ բանակի՝ թողուցին իրենցմէ զատուելու: Մարտաւազդ մէկ մ'որ խաբուած բանակին բազմութենէն դուրս ելաւ, մէկէն վազեց դէպ ՚ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ Սրաց ամուր և ազատ կողմերը երթալու. այն ատեն այս գաւառուս դեռ իր Մնի բերդը իշխանանիստ չէր ըրած, այլ կ'երևի թէ հիմակուան Սուսաց իշխանանիստն և ամուր բերդաքաղաքն Կիւմրի՝ էր զլիաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նրստէր: Մարտաւազդ անոր շատ անիրաւութենէն թերևս քիչ մը պակաս անիրաւութեամբ մը վրէժ պահանջեց. սպաննեց և ժողոված ստակները յափրշտակելով գնաց Սրաց կողմը, միաբանեալ իշխանազանց հետ մէկտեղ: Մարաբացուց աչքերն բացուեցան. մէկէն նախնի ոստիկաններէն մէկը զօրապետ գնելով և իրենց ծառայութեան մէջ եղող հայոց սպարապետ Սմբատն այլ մէկ տեղ առած՝ Մարտաւազդայ ետևէն ընկան, ինչուան Մարտիակի կողմերը յարձրկելով. բայց հազիւ քանի մը կտոր բան կրցան աւ.

րել, և յետ դարձան. վասն զի Ղարտաւազդեանք ինչուան Արգերացուց երկիրը (Չէրքէզ) գացին, և այն տեղւոյն ու մօտի Սրաց գաւառաց տիրեցին: Իսկ Իսկանդար ինչպէս որ ստիկանն ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ առի անգուժ հնարքը բանեցրնել. այսինքն դարձեալ ամէն դի հարկահաններ ղըրկել. որք պժգալի պիծակներու պէս ելան ժողովրդեան մնացեալ վաստակը ուղեւծուծը քամելու. բայց այս անգամ շատ չյաջողեցան: Սասն զի եթէ Ղարտաւազ հեռու էր, մօտ էր Սուշեղ. որ նախ իր երկիրներուն մէջ մտածները հալածեց, և բռնութիւն ընողներն այլ բռնաբար սրով դատեց. և պահ մը իր ընտանիքը Արասիտաճորոյ մօտ Ղարտազերից ամուր բերդը ապահովցրնելով, ելաւ անկէ 60 կորիճ առած հետը՝ մտաւ այս մեր եղած Ռազրեանդայ գաւառը, ուր Լալու-Սալուր՝ փոխանակ հեզաբար ծաղիկ քաղելու՝ բռնաբար հարկ պահանջէր. զնա այլ անոր մարդիկներն այլ կտորելով՝ փոթորկի պէս յառաջ անցաւ. իսկ ծխահալած պիծակներն՝ ահով ղողով սկսան ծակերնուն մէջ քաշուիլ. որով համարձակութիւն առին նեղեալ և լկեալ փախստականք հայոց գալու և Սուշեղայ պզտիկ գրնդին խառնուելու. որուն համբաւն և սարսափը չորս զի տարածեցաւ. բայց զօրաց քիչուորութիւնն այլ իմանալով ոմանք ՚ի թշնամեաց սիրտ ըրին մէկէն վրան հասնելու և թերևս մէկ հարուածով վերցրնելու իրենց արգելք և սատակիչ եղողը: Բայց այնպէս գաղանացեալ Սամիկոն մը բռնել՝ շատ դժար և վտանգաւոր փորձ էր: Բայս պէս փորձեցին նախ 200 արաբացի պատերազմողք որք Արսնոյ քաղքէն (Արզիրում) ելան աղէկ զինուած և զրահուած և իջան ՚ի Ռասեն, գալու ՚ի Ռազրեանդ. գիշերը վրայ հասնելով մտան Արար գիւղը, (թերևս Սժնկերոյ մօտ) և անոր այգեստանեայց մէջ փուռեցան, այգեաց պատերը իրենց պատնէշ կարծելով: Իմացաւ Սու-

շեղ, և հետը քանի մը կտրիճ՝ առած՝ գիշերանց հասաւ հոն. և որովհետև այդ պատերը հիւսած չէին՝ այլ միայն քար քարի վրայ դիզած՝ ցանկի մը պէս, անոնց տակ նստող և պառկողներուն վրայ փլուց. հոն կապուած ձիանն այլ խրտելով՝ սկսան իրենց տէրերը կոխկրուտել. գիշերուան, ձիերուն, պատին փլէլուն շփութութեան հետ մէկտեղ՝ ներս թափեցան Սուշեղեանք: Աղածն յայտնի է. թերևս ոմանք մերկ կողոպուտ կրցան փախչիլ ազատիլ, բայց շատերն այն քարերուն տակ քնացան մնացին:

Հազիւ քիչ մ'ատեն կրցաւ Սուշեղ հանգիստ առնուլ իր ամրոցը, վասն զի այլազգեաց աղաղակն կու գուայր. Դունայ կողմնակալ զօրավարն իր պահապան զօրաց մէջէն չորս հազար կորիճ ձիաւոր ընտրեց և յանձնեց Լալու-Կէճիպ զօրապետին, որ երթայ ջարդէ ջնջէ ապստամբները: Կէճիպ իր գունդը անոնց երազընթաց տաճիկ ձիերուն պէս թռցրնելով հասարակաց դուրան ճամբէն, յԱրարատայ ՚ի Արզովիտ, անկէ ՚ի Ռազրեանդ հանեց, և եկաւ անոր գլխաւոր շինաւանին մօտ, որ է Ռազաւան (Սուշեղիսէ): Բայս աւանին մօտ, այս Արածանոյ նախընծայ վտակաց եզերք, այս մօտիկ Արատ լեռան շքին տակ էր, որ անկէ 400 տարի առաջ ուրիշ Սուշեղ մը, Քաշախուրճ Սուշեղ, Շապհոյ արքայից արքային ահեղ բանակը ցրուեց. բայց այն ատեն Հայ-Արշակունի թագաւորի մը ամբողջ զօրաց սպարապետ էր, և յունական գունդ մ'այլ մարտակից ունէր, և Սեծ՝ Կերսէս մը բազկատարած աղօթաւոր: Բնկէ 200 տարի վերջ՝ ուրիշ Սուշեղի մը վրայ գալով՝ անցաւ Ռազրեանդէն Արարով Բնուշերուան, և կտորեցաւ ՚ի Սուշեղայ Արարատ գետոյն վրայ: Իսկ այսօր անոնց թոռանց թոռն հրահատեանն Սուշեղ՝ 4000 արաբացի սպառազէն ձիաւորաց դէմ ունէր 200 Հայ. քսաւնի դէմ մէկ միայն. սակայն ունեցածն բաւական եղաւ իրեն: Բնոնք յարձը.

կեցան եկողներուն վրայ, շփոթեցին, ցրուեցին, շատերը գետին փռեցին, աւելի շատերը փախուցին. փախստականաց ետևէն ընկան, օրով ճամբայ հալածեցին դէպ 'ի հիւսիս, ինչուան Ղրադաժ լեւան ոտքը. շատերն այլ ճամբուն վրայ փռելով, և անոնց հետ զօրավարնին ալ, աւարներով և ձիոց երամակով յաղթական դարձան: Ղլաղգեաց մնացորդքն հասան 'ի Ղուին, բոլոր քաղաքը 'ի դող, 'ի սուգ, անէծք և նզովք շարժեցին. և այնպէս ահ ընկաւ մէջերնին՝ որ ամէն դռնէ կարծէին Սուշեղը ներս մանել. և գրեթէ չի վստահանալով քաղաքին ամրութեանը՝ ներքին ամրոցը քաշուած սմբեցան:

Ղյս անակնկալ և գրեթէ անհաւատալի յաղթութիւնն և յաջողութիւնն, և այն ահարկու Ղրաբացոց ահաբեկ ըլլալն՝ կրնայ գուշակուիլ՝ թէ երկայն ասենէ 'ի վեր ընկճած ժողովրդեան մը ինչ ազդեցին. ինչպէս համբաւն հռչակուեցաւ. ինչպէս գլուխներ տաքցան՝ խելապատակէն այլ 'ի վեր, մինչև խոհեմութեան և նախահոգութեան ձայները չլսել. և զիրար գրգռելով պատշաճէն վեր բաներ մտածել. մանաւանդ չափազանց բորբոքեալ ճգնաւոր մը, աւելի սրտին հարցնելով քան Ղստուծոյ, զամէնքը յոր դորէր և քաջալերէր, և իբրև տեսիլք տեսած՝ հաւանեցնէր թէ արդարև ազգին բազդն հասած է. մի տարակուսիք կ'ըսէր, ձեր մէջէն մէկն բաւական է հազարի դէմ կենալու, երկուքն՝ բիւրուց դէմ: Նիրաւի շատ դժար այլ էր ռամկաց՝ յետ 200 կտրիճներու 4000 սպառազէն հեծեալները վանելն տեսնելու՝ այս դիպուածին մէջ՝ սրբութիւնը և ստուութիւնը իրարմէ որոշել. բայց ոչ միայն ռամիկ մարդիկ և աւանձին իշխանք միաբանեցան, այլ ինչուան Սմբատ բազրատունի սպարապետն այլ հաւանեցաւ թողլու Ղրաբացիս և միաբանելու ընդ համազգեացն: Ղյս բանս յաղթութեան մը չափ արժեք միաբանելոց. բայց մեծադոյն յաղթութեան մ' այլ կու փափա-

գէին. այսինքն հաւանեցնելու զՂշոտ, նախայիշեալ Սահակայ իշխանապետին որդին, որ չափաւոր տարօք, և տարիքէն աւելի փորձ հռչակեալ խելացի մարդ էր. որչափ այլ հայրենեաց փառքը փափաքէր, այլ աւելի աւոր ապահովութիւն կու պահանջէր. կ'իմանար կ'իմացնէր այն ճգնաւորին չափազանց նախանձաւորութիւնը, և կ'ըսէր իրեն եկող իշխանաց և յորդորաց. «Ս'լ հայրենասէրք, զգոյշ կեցէք. քաջ էք և եռանդուն, բայց աւելի լաւ է իմաստութեամբ զործել և ձեզմէ առջիններուն փորձը քննել. կամք և կարողութիւն միշտ չեն կրնար իրարու հաւասարիլ. մէկն 'ի ձեր ձեռքն է, մէկայլն ոչ. շուտ և անակնկալ յաջողութիւնք՝ երբեմն մեծագոյն անյաջողութեանց պատճառ կ'ըլլան: Վանի մը հարկահան և զօրավար զարկիք, քիչով շատերու դէմ կեցաք. և երթալով կու յուսաք շառնալ. սակայն ինչուան որչափ կրնաք բազմանալ, ինչուան երբ միագունդ մնալ: Ղեռ Ղրաբացոց մեծ զօրավարն 'ի Ղուին է. դեռ 'ի կարին ուրիշ մեծ զօրավար մ' այլ կայ, դեռ շատ բերդեր անոնց ձեռքն են: Եթէ բերդերն այլ առնուք, եթէ հայաստանի մէջ եղած զօրքն այլ հալածէք, դեռ դժուարութիւնը քիչ մը կ'ուշացնէք. վտանգը կը մօտեցնէք: Ինչ պիտի ըլլայ ձեր բովանդակ գունդն Վսիւրէլ Սումնեայ տէրութեան ծովածաւալ և ահաւոր զօրութեան դէմ: Ս'ը ազգ որ տէրութիւն կրցաւ կամ կրնայ անոյ դէմ կենալ. Յունաց տիեզերական ինքնակալութիւնն այսչափ անգամ կը ռուելով՝ չկրցաւ իր կորուսած երկիրները 'ի ձեռք ձգել. ահա կայսրն Վստանդին որ մինակ առիւծներու դէմ ելլելով՝ սպաննեց, տեսէք ինչպէս սարսափած՝ թող կու տայ որ ամիրապետն կոխէ իր սահմանները: Ինքն ծովն ոցամաքը բաւական ամուր չգտներ այն պիտի թշնամոյ մը դէմ, դուք ինչ բանի վրայ դրած էք ձեր ապահովութիւնը: Երդ եթէ կ'ուզէք ճամբատա-

պէս հայրենեաց օգուտը, ինչպէս և ես ամենայն սրտիւ, հանդարտօրէն մտածելով կեցէք տեղերնիդ. և ջանացէք իմաստութեամբ դարման փանիլ եղած և կրած չարեաց: Այա թէ ոչ, ինծի կ'երևի, թէ կամ յետ վնասակար փորձոյ՝ պիտի յանձն առնուք կորակոր նուաճիլ նստիլ տեղերնիդ. կամ յուսահատած միայն զձեզ ապրեցրնել ջանալով՝ ինքնակամ թողուլ հայրենիք, տուն տեղ և վաստակ, ձեր հարց քրտինքով ժառանգած բարիքը, ձեր նախնեաց հաւատքով կանգնած եկեղեցիները, և ձեր ծնողաց գերեզմաններն այլ ատելեաց ոտից կոխան, և երթալ 'ի ծառայութիւն կայսեր Յունաց, և պանդխտութեամբ կեանքերնիդ մաշել: Այս կամ, որ շատ վախնալի է, շուտ կամ ուշ՝ ձեր թշնամեաց ձեռքը ընկնալով՝ չարաչար մահուամբ պիտի ջնջուիք: Այս և այսպիսի բանք բաւական չեղան այն տաքցած գլուխները զովացրնելու. թողին զ'ընտ, և եկան մնացեալ իշխանքն իրարու հետ դաշինք դնել, խորհուրդ ընել, հնարք մտածել. այլ ինչպէս շատ անգամ պատահած է և կու պատահի այսպիսի դիպուածոց մէջ, չկրցան միաբանիլ մէկ գործոց վրայ. ոմանք իրենց երկիրը քաշուեցան, ոմանք ամուր բերդերու ապաւինեցան: Ամենէն տաք գլուխներն որ Սուշեղայ հետ միաբաներ էին՝ զինուոր և ռամիկ, 5000 հոգի գունդ մը եղան. Ղուինը թողուցին, զնացին կարնոց քաղաքին վրայ, զոր քանի մը տարի առաջ Այգիտ ոստիկանն առեր էր 'ի Յունաց և լաւ ամրացուցեր. թերևս հիմա մէջը բաւական զօրք չկար, չէ հայոց թուոյն՝ այլ ոգւոյն դէմ կենալու. բայց պարիսպներն բաւական զօրաւոր էին. բոլոր այն տարի (774) ձմեռուան սաստիկ սառամանիքներէն այլ չձանձրանալով, հայք պաշարեցին կեցանքադքին քով. և մեծամեծ մեքենաներ կանգնելով՝ կու ծեծէին պատերը. և քանի մը ծակ բանալով՝ կրցան քիչ մը քար թափել 'ի ներս և քանի մը մարդ սպաննել. բայց աւելի սովով

կու նեղէին քաղաքը, որ և անձնատուր ըլլալու վրայ էր, երբ յանկարծ մեծ միրիկ և զօրաւոր հարկ մը հասաւ հայոց: Ասոնց հեռանալը յ'Այրարատայ, և ոմանց այլ իրենց բերդերը քաշուիլ տեսնելով՝ Ղուինեցի արաբացիք, սիրտ առին, չորս կողմէն այլ ժողովեցան, և սկսան այրած սրտով ու ծարուած սրբով մօտակայ գաւառաց մէջ պտրտիլ, և շատ արիւնահեղութիւններ ընել. բայց ապստամբները նուաճելու համար ստիպուեցան ամօթով՝ եղածը իմացրնել ամիրայետին. որ վրէժխնդրութեան յարմար առիթ գտնելով, անթիւ զօրաց միջէն ընտրեց Այորասանի կտրիճները, 30,000 հոգի, ձիով և զրահով աղէկ մը պատրաստած, և յանձնեց Ամիր Ապն-Ասմայիլ փորձ և հռչակաւոր զօրավարի մը ձեռք: Ար և հարաւային հովերէն առաջ անցաւ Ասորեստան և Ղզձնեաց կողմերէն գալով մտաւ 'ի Ալաթ մեծ քաղաքն. և ժողովելով հաւատարիմ մարդիկ՝ աղէկ մը քննեց տեղեկացաւ հայոց պատրաստութիւնը, որչափ հոգի միաբան և ուր ըլլալնին, և ինչ ոյժ ունենալնին. զոր 'ի հարկէ շատ քիչ և իբրև ոչինչ գտաւ իր բանակին բազմութեան և կազմութեան համեմատելով: Հոն 'ի Ալաթ էր այն ատեն խոհական իշխանն Աշոտ. և տեսնելով իր հայրենեաց վրայ եկած չարիքն, և իր խրատած իշխանաց անհաւանութիւնը, սիրտն կ'այրէր կու հալէր, առանց կրակը դուրս տալու. մանաւանդ որ պիտի ստիպուէր Արաբացւոց գործակից ըլլալու իրեններուն դէմ: Անհնարին տազնապին մէջ առանց ատեն կորսընցրնելու ամենայն ծածկութեամբ իմացուց իշխանակցացը՝ Ամիրի պատրաստութիւնը. և ահա ժամանակն է, կ'ըսէր, ցուցրնելու ձեր խոստացած հաստատութիւնը, կամ իրարու պաշտպանութեամբ մեռնելու: Այլի խրատուն մտիկ չըրին դաշնակիցք, ետքինէս կասկածեցան. կարծեցին որ Աշոտ Արաբացւոց հաւատարիմ մնալովն՝ զիրենք խաբել կ'ուզէ և հեռացրնել 'ի Ալաթայ. և

մտքերնին դրին Վարնոյ պաշարողացնը-
ման՝ այս մեծ քաղաքս այլ առնուլ յայլ-
ազգեաց: Համազասպ Վրժրունեաց
իշխանն գլուխ կեցաւ, Սասաուրականի
զօրքերէն զատ՝ Վատունեաց գունդն
այլ, Սմբատ սպարապետին Վշտ եղ-
բօր գունդն այլ մէկ տեղ առաւ, և ե-
լաւ երթալ Սանայ ծովուն հիւսիսայ-
ին արեւելեան կողմը՝ Վրժէշ բերդա-
ւանին վրայ, ուզելով հիմնայատակ ը-
նել. անցած տեղերէն ռամիկ հետեակ
մարդիկ այլ կու ժողովէր կու խառնէր
զօրքերուն: Երբ հասան ՚ի Վերկրի,
Խլաթէն Հայ մը եկաւ նորէն իմացը-
նելու թէ Վար զօրավարն մօտ է երեք
բիւր և աւելի զօրքով: Համազասպ
հպարտացեալ՝ զայս այլ նենգութիւն
կարծեց, և փոխանակ պարգևելու՝
պատժեց լրաբերը, և առաջ անցաւ
հասնելու յՎրժէշ: Երբ բնակիչքն
այլ իմաց տուեր էին Վարայ, որ բազ-
մութեամբ զօրաց ծածուկ ճամբանե-
րով եկեր ապահով տեղ մը դարաներ
էր, և հազիւ թէ Հայք սկսան Վր-
ժէշի բերդը ծեծել, Վրաբացիք դա-
րանէն ելելով վրանին ընկան, և ան-
զէն անհմուտ հետեակ գնդին մեծ
մասը ջարդեցին, ոմանք այլ փախելու
ատեն ծովը թափեցան. և այսպէս ան-
խոհեմութեան զոհ եղան 1500 ան-
պարտ մարդիկ. անոնց հետ իրենց ա-
ռաջնորդ չորս ազնուական իշխանք այլ.
մնացեալքն փախստեամբ ցրուեցան:
Եյս պատահարս եղաւ ապրիլի 16^ն
(775): Երաբացիք զանոնք երկար մի-
ջոց հարածելէն ետև՝ դարձան անկէ
մէկայլ ապստամբները բնտուելու. և
Խլաթու և Սանազկերտի գաւառնե-
րէն վեր փութալով թափեցան հոս, ՚ի
Բագրեւանդ:

Ե՛հա այս էր այն հնոցանման սև
ծուխն զոր տեսնայինք յարևելից. որ և
կոխելով այս ծաղկազարդ վայելու-
թիւնները, գետոյս աղբերականց քով՝
Աջծնի ըսուած գիւղը իջան. և դադրե-
ցան զէնքերնին սրելու և մահու գործիք-
ները պատրաստելու: Իսկ արևմուտքէն
փրթած փոքր արծաթափայլ հեղեղն՝

էր Սուշեղեան գունդն Հայոց, որ պա-
շարէր զքաղաքն Վարնոյ. և յանկարծ
լսեց Վրժիշու կոտորածը: Յետ այնչափ
երկայն համբերութեան, պզտի գնդով
մը այնպիսի մեծ քաղաք մը պաշարե-
լու և վտանգելու, որսը բռնելու ատեն՝
ստիպուիլ թողուլ, որքան ծանր, որ-
քան սրտակտուր էր: Ելլ ուրիշ հնար
չկար. ակռանին կրճտելով դարձուցին
երեսնին ՚ի Վարնոյ. բայց ո՞ր երթան:
— Երկու ճամբայ կար դիմացնին.
մէկն և ապահովագոյնն էր՝ Երտա-
ւազայ բռնածն, անցնիլ երթալ յա-
րևմուտք և ՚ի հիւսիս, Յունաց կողմը
մտնել, և յետ այնքան նեղութեանց՝
գոնէ ապրիլ և հանգչիլ: Իսկ մէկ այլն՝
կորիւնը կորուսած առիւծուն ճամբան.
զօրաւոր թշնամեացը վրայ դառնալ և
յուսահատ կատաղութեամբ զարնուիլ
ըլլայ ինչ որ ըլլայ: — Եւ այս ետքինը
ընտրեցին այն զայրասիրտ ընկերակո-
րոյս առիւծքն: Վարնոյ լեռանց դարե-
րէն թափուիլ ՚ի Բասեն, և անկէ այլ
Սուկաւ լեռանց (Վէտսէ տաղ) կրու-
նակէն ընկնիլ ՚ի Բագրեւանդ, քիչ օ-
րուան քիչ ժամուան գործ մը եղաւ ի-
րենց. հոն այլ չդադրելով, ոչ թշնամ-
ւոյն բազմութիւնը ուզեցին քննել, ոչ
անոր շարժելուն սպասել. այլ դարու-
դուր գետնի մը վրայ արձրկած հրա-
գունտի պէս ցատքըտելով առաջ եկան,
և փոխանակ թշնամեաց՝ իրենք անցան
գետը՝ և մօտեցան: Թշնամեաց ասեղ
բազմութիւնն և աւելի ասարկու պատ-
րաստութիւնն, արաբիկ երիվարաց
վազն ու փոխնչն, լուսնանիշ վրանաց
և դրօշուց շարժիւնն, խառնալուր ա-
ղաղակն, գոչումն և ողատերազմական
գործեաց և թմբկաց որոտումն, փո-
խանակ զիրենք վախցրնելու, այնքան
աւելի կատղեցուցին բոբբոբեցին, որ
Երաբացուց բանակէն քանի մը հարիւր
քայլ հեռի՝ թողուցին ոչ միայն իրենց
բեռները, այլ և ձիանքը. հետեակուց
աւելի ազատ և համարձակ կրնային
հայկական աղեղները քարշել հեռուէն,
ու մօտանց թուր ու նիզակ շարժել:
Երկայն ճամբուն յօգնութիւնն այլ

չէին ուզէր մտիկ ընել, եթէ գիշերուան սեաւ վարագոյրն երկու բանակաց մէջ չկախուէր: Ընոր մէկ կողմը 30,000 սպառազէն Ղրաբացիք, մէկայլ կողմն 5000 հետեակ թէթեազէն Հայք անցուցին, ինչ հոգւով, ինչ մտածութեամբ, ապրիլի 24^{էն} 25 մտնող միջոցը, կրնայ գուշակուիլ քան թէ գրուի: Ընաւստն հազիւ թէ ծագեց՝ Հայք անհամբերութեամբ նետուեցան բազմութեան մէջ, սաստիկ կոտորած մը ըրին, սրընթաց հեծեալներուն մէկ մասը հալածեցին հեռացուցին. բայց վերջապէս իրենք այլ յոգնեցան: Ըրաբացիք սրտմտեալ և զանահար յետ դարձան, Հայոց նախարարներէն մէկ քանին (որ ռամկին պէս հետեակ չէին) քշեցին իրենց ճորտերովը. ռամկին այլ ետ քաշուեցաւ. այն ատեն Ղրաբացի հեծելոց եկաւ վրէժինդրութեան կարգն. սկսան կոխկրուտել դէմ զնող հետեակ Հայերը: Ընոր իբրև երկայնաչար ալիք՝ աւելի մեծ և երկայն ալիքէ մը ծածկուելու թաղուելու ատեն, վերջին անհնարին ճիգ մ'այլ ըրին. յետին յուսահատութեան կամ յուսոյ ձայն մը վերուցին. իրար զիրար կանչելով և սիրտ տալով. «Քանի որ թեւերնուս վրայ դեռ քիչ մը ուժ կայ, կ'ըսէին, պէտք է թափենք մեր հայրենեաց և եկեղեցեաց վրայ. ողջ ողջ երես դարձնել և յետ դառնալ՝ անկարելի ըլլայ մեզի. մեռնինք զէնք ՚ի ձեռին, քան փախստեամբ ապրինք»:

Եւ արիւնոտ աչուրնին մէկ մը երկինք տանելով, մէկ մը Ղազրեանդայ պաշտպան Ս. Յովհաննեսին, կանչելով ու գողարով, նորէն յարձրկեցան, և անգամ մ'այլ՝ իրենցմէ մեծ և ուժով ալեաց վրայ ելան. միայն հազար հոգի մնացեր էին միագունդ՝ երկու երեք բիւրուց դէմ, զոր վերջին անգամ մ'այլ քշեցին: Իսկ ասոնք այնպէս զարհուրեալ շփոթեալ էին, որ չէին գիտեր թէ մարդո՞ւ հետ, հրէշից հետ, թէ հրէշտակաց հետ կու պատերազմին. և իրաւ թէ սուտ՝ իրենց շփոթութիւնը ծածկելու համար, յետոյ կու պատմէին,

թէ մենք Հայոց գնդին հետ կու տեսնէինք երկնաւոր զօրքեր, պապաներ և երէցներ, որք աւետարանօք և բուրվառօք կ'առաջնորդէին անոնց: Ընուշտ այսպէս տեսան ինչուան որ Հայոց վրայ զէնք շարժելու ոյժ չմնաց: Ընն աւտեն թիւն յաղթեց. և երբոր դիմակաց չգտաւ՝ արաբացի գունդն յաղթական եղաւ: Տարիէ ՚ի վեր անդադար կռուող և վազողք, 3000 Հայք իրենց նիզակաց վրայ երես ՚ի գետին Ղրածանոյ ծաղկանց մէջ փռուելով՝ արիւնով ներկեցին ապրիլի փոոցը: Հոն երկու բարձր ծառոց պէս ընկան պարագլուխք նահատակացն՝ ինչուան ետքը իրենց խոստմանն և քաջութեան հաւատարիմք, Սուշեղն մամիկոնեան և սպարապետն Սմբատ. անոնց հետ նաև շատ մեծատոհմիկ նախարարներ, ինչպէս բազրատունին Սահակ, գնուին Սահան՝ Սաշնակ, և Սամուէլ մեծ նախարարն Սամիկոնէից՝ որ տարւօք դեռ երիտասարդ, և գեղեցկութեամբ անուանի, ծաղկանց մէջ ծաղիկ, և իր ընկերակցայն հետ յիրաւի գարնան ամէն զարդերէն աւելի սրտաուուչ փայլեր իր վերքերէն բղխած վարդերուն մէջ:

Եթէ այն ճգնաւորին քիչ մը արտորնօք տեսած և շփոթած տեսլեանն համեմատ՝ փառաւոր վախճան մը չունեցաւ պատերազմն, սակայն և ոչ բուրովին անօգուտ մնաց: Եւ և գործն քիչ շատ սուգտանելի ըլլայ անաչառ դատաստանի առջև, չկրնար անտես ըլլուիլ անոնց քաջութիւնն, հայրենասիրութիւնն, կրօնասիրութիւնն այլ: Իսոյ աղքանախանձ միաբանութիւննին աւելի գովելի կ'ըլլար եթէ ըստ իրատուն Ղշոտոյ շարժէին պատերազմէն առաջ կամ պատերազմի ատեն. և կամ թէ յետ պատերազմին՝ Ղրծրունին Սեհրութան չապաններ քաջին Սուշեղայ երկու որդիքը, որք իրեն ապաւիններ էին, իբրու թէ հայրերնին եղաւ պատճառ այնքան մարդկան և իր հարազատաց կոտորածին: Իսկ Ղրաբացիք որ այն գունդը կոտորեցին, և Ղազ-

րեանդայ դաշտաց վրայ անթաղ թողուցին, ու սկսան չորս դի աւրել և աւարել, իրենց կորուստներն այլ չէին կրնար ծածկել, և ոչ իշխել շատ հեղայնպիսի փորձեր փորձելու: Ամբ իբրև յաղթական՝ ամիրապետին՝ երթալու ատեն՝ չարաչար ցաւերով բռնուած մեռաւ ՚ի Պարսկաստան. քանի մը ամսէն ինքն ամիրապետն այլ նոյնպէս վերցուեցաւ. յաջորդ տարին՝ պատերազմին մէջ ընկնող Սմբատ սպարապետին որդին, Ղշոտ, սկսաւ նորէն Ղրաբացուոց ետեւէն ընկնիլ, և երկիրները ազատելով՝ Ղնի բերդը ամրացոց, որ յետոյ իր ցեղին թագաւորութեան աթոռ եղաւ. և օր մը աղօթք ընելու ատեն՝ թշնամիներէն պաշարուած, աղօթքը չթողուց, այլ լմանցընէէն ետեւ ելաւ զարկաւ զանոնք և գլխաւորնին՝ Սիպառոն Ղբղլայն՝ երկու կտոր ըրաւ: Ղսկէ ետեւ եկող ոստիկանք սկսան զգուշութեամբ վարուիլ հայոց հետ, մանաւանդ հարուն Սլ-Քէչիտ, որ ամիրապետ ըլլալէն վեց տարի առաջ (750) հայոց և Պարսից մեծ ոստիկան գրուեցաւ, և խաղաղութեամբ իշխեց:

Ղյս է Ղսգրեանդայ ըսուած կրօնին, զոր կարմիր արձանագրութեամբ նշանակէ հայադիրն յ' 18 ահեկանի (25 ապրիլ) 775 թուին Վրիստոսի:

Հ. Դ. Մ. Ա.

Ծանրոշքիւն և տեսակարար ծանրոշքիւն:

(Տես երես 79)

Արպէս զի ծուռ գաղափար մը չունենանք, պէտք է լաւ միտք առնունք որ մարմնոյ մը ծանրութիւնը իր մէկ որպիսութիւնն է բացարձակապէս անփոփոխելի. ուստի որչափ ալ բնական կամ բնալուծական ներգործութեանց տակ ձգենք զմարմինն, ամենևն ին իր ծանրութիւնը չփոխեր, միայն թէ վրան բան

մը չաւելցուի կամ թէ իրմէ բան մը չվերցուի: Ասկ տարածոցն ըստ ամենայնի այս որպիսութիւնս չունի. և թէ պէտ կարծուածէն շատ աւելի դժուարին ըլլայ մարմնոյ մը տարածոցը փոխել, սակայն կրնայ քիչ մը փոխուիլ թէ հաստատոնոց և թէ հեղանիւթոց տարածոցը, և շատ՝ օդունը ճնշուելով ու ըլլալով պզտի տարածոց մը, կամ ընդարձակելով մեծապէս: Ղսկէ կը հետեի թէ տեսակարար ծանրութիւնն, որ կ'առնուի ծանրութեան մարմնոյն տարածոցին հետ ունեցած բաղդատութեանէն, ըստ ամենայնի անփոփոխական չէ իւրաքանչիւր տեսակի մարմնոց վրայ. բայց այս տարբերութիւններն այնչափ մեծ չեն հաստատոնոց և հեղանիւթոց վրայ, մանաւանդ երբ մտածուին որոշեալ բարեխառնութեամբ մ'առնուած. վասն զի գրեթէ անխախտ օրէնք է որ մարմինները տաքնալով՝ քիչ կամ շատ մեծ տարածոց կ'առնուն քան զառաջինն, և պաղելով կը դառնան առաջին տարածոցը: Աւստի երբ վերն ըսինք թէ հաղարհրամ կ'ըսուի լիդը մը ջրոյն ծանրութիւնը, պէտք է յաւելուլ որ բարեխառնութիւնն ըլլայ հալող սառուցին բարեխառնութեանէն քիչ մը վեր:

Տեսակարար ծանրութիւնն ալ, ինչպէս ուրիշ ամէն չափ, հաստատուն միութեան մը վերբերեցաւ, և ջրոյն տեսակարար ծանրութիւնը միութիւն առնուեցաւ. ըստ այսմ երբ կ'ըսենք թէ կապարն ունի տեսակարար ծանրութիւն 11.44, կ'իմանանք որ երկու տարածոց իրարու ճիշդ հաւասար ջրոյ և կապարի, երկրորդն իբր տասներմէկ անգամ ու կէս աւելի կը կշռէ քան զառաջինն: Արդրական չափերն ՚ի գործ դնելով կը տեսնենք որ նոյն բանն է ըսել մէկ լիդը կապարը կը կշռէ 11.44 հազարահրամ:

Արբ լաւ միտք կ'առնունք թէ տեսակարար ծանրութիւնն է համեմատութիւնն ծանրութեան և տարածոցին, կ'իմանանք որ եթէ գոյացութեան մը կտորը կը կշռէ, օրինակի համար,